

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԿԱՄԱՆ ՆԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ
ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐԸ**

(Զեկույց հայ իրավաբանների միջազգային համաժողովում, 19.09.2009թ.)

Գ.Գ. Նարոյությունյան, ՆՏ սահմանադրական դատարանի նախագահ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Նարգելի գործընկերներ,

Նարգարժան հայրենակիցներ.

Ես այս թեմային անդրադառնում եմ երկրորդ անգամ: Առաջին անգամ հրապարակեցի մի հոդված, որը վերնագրել էի՝ «Իրավունքի ընկալման հայկական այբուբենը կամ «Որոգայթ փառաց»-ից 230 փարի հետո»: Այն փայտագրվեց սահմանադրական դատարանի տեղեկագրի 2003թ. 3-րդ համարում: Նպատակ ունեի պարզության դասերով մեր օրերի ձեռնախեղված իրավամտությանն սթափության կոչել: Նեպագա փարիներին փորձեցի ներկա հիմնախնդիրների համադրությամբ առավել խոր ուսումնասիրել հայ իրավական մտքի պարզությունը, եւ 2005թ.¹ հայերենով, ապա՝ 2009թ. անգլերենով հրապարակեցի մենագրություն՝ «Սահմանադրական մշակույթ, պարզության դասերը եւ ժամանակի մարտահրավերները» խորագրով: Անգլերեն հրապարակության օրինակները ես սիրով նվիրել եմ խորհրդատուների բոլոր մասնակիցներին, եւ հուսով եմ, որ իմ այս ելույթը հավելյալ հեղափոխություն կառաջացնի՝ ընթերցել այն եւ հաղորդակիցը դառնալ ներկայացվող մտորումներին:

Բնականաբար, հակիրճ զեկույցով այս թեման սպառել հնարավոր չէ, ուստի կփորձեմ կատարել մի քանի կարեւոր ու, մեր կարծիքով, այժմեական հնչեղություն ունեցող շեշտադրումներ:

Դեռեւս 1901թ. մեր հայրենակից Կ. Յ. Բասմաջյանն անդրադառնալով հայ իրավունքի մասին օտար հեղինակների ուսումնասիրություններին, հիշատակելով դոկտոր Ֆերդինանդ Բիշոֆին, դոկտոր Կոհլերին, պրոֆ. Ռ. Դարեսպին եւ այլոց, շեշտում է, որ «Նայկական իրավանց հիմնական փարրը, Վաղարշակէն մինչեւ Բագրատունեաց ժամանակ, ընդամենի նահապետական կազմակերպութիւնըն էր, հասարակուած աւանդութիւններու եւ մանաւանդ Ս. Գրոց վրայ, **որ իր կարգին ծնունդ տուած է Կանոնագրոց**»¹ (ընդգծումը մերն է-Գ.Ն.): Ուշադրության արժանի ընդհանրացում է անում նաեւ Արսեն

¹ Բասմաջյան Կ. Յ., Նայկական իրաւունք ի սկզբանէ մինչեւ մեր օրերը // ԲԱՆԱՍԷՐ, Փարիզ, 1901, պրակ Բ եւ Գ, էջ 68:

Ղլտրճյանը, որը 1913 թ. Նայոց հին իրավունքին նվիրված ծավալուն ուսումնասիրության մեջ անդրադառնալով օտար հեփագրորդներին, ըստ էության այն հերեուրյանն է հանգում, որ անփեղի է հայ իրավունքի վրա օտար ազդեցությունների փնրրփուրը, քանի որ հայ իրավունքն իր արժեքային հենքով, բնույթով ու ամբողջականությամբ ինքնուրույն ձեռագիր ու զարգացում է ունեցել: Նա, մասնավորապես, շեշտում է, «...հայերը ունեցել են ազգային իրավունք [...] այդ մասին մեր հայրենի իրաունքի աղբիւրները մասրակարարում են բաւականին ապացույցներ»² :

Նայ ժողովրդի պարմությունը որքան էլ դժվարին ու գոյապայքարի փագնապներով լեցուն է եղել, որքան էլ լի է եղել իր նկարմամբ գործաղրված բռնություններով ու ավերածություններով, միեւնույն է, դրանք չեն կարողացել խաթարել ինքնության արժեքանական հիմնական որակները: Դրանց մեջ շարունակաբար գերակայել են ավանդապաշտությունը, ընփանիքին նվիրվածությունը, սերունդների փոխկապվածությունը, մարդասիրությունը, երեուրյների խորքային խոհափիլիսոփայական ընկալումը, հավափարմությունը հոգեուր արժեքներին ու օրինականությանը: Նայ իրականության համար անսասան արժեք է եղել այն իրողության գիփակցումը, որ, ինչպես նշում է Թովմա Արծրունին, «...հոգիների կորստյան դուռն առավել է, քան՝ մարմինների...»³:

Նագար փարի առաջ Գրիգոր Նարեկացին իր Մափյանում լավագույնս ներկայացրեց հայ ինքնության հոգեուր ընկալումների խփացումը՝ «...նշավակելով ամենափարբեր կրքերն ամենքի» շեշտեց, որ մարդ արարածի գործած մեղքերը, որքան էլ բագում ու բագմաբնույթ լինեն, ոչ այնքան նրա հանցանքն են, որքան նրա դժբախտությունը: Եվ հայ ժողովրդի շուրթերից հնչեցնելով «...ամենաբարձր աղոթքն առ Ասրված», Նարեկացին մարդուն դարձի բերելու հնարավորություն ու նրան մարդ սարեցնելու միջոցն էր աղերսում: Իսկ դա հնարավոր էր համարում **համերաշխության, արդարության, օրենքին հերեուղ ու «հոգով բժշկված» հասարակության պայմաններում, ուր արդարությունը չի կարող «... նվագելով իսպառ ջքանա» կամ «...իրավունքների նժարը սաստիկ թեթեւանա»՝ ձանրացնելով «...անիրավության կողմը»:**

Որքան հսփակ ու այժմեական են հնչում այս մարգարեությունները:

Մեր պարմության յուրաքանչյուր էջ, սկսած ընդիուպ Արրափայի թագավորությունից, վերահասփարումն է այն իրողության, որ օրենքն ու իրավունքի ճանաչումը հայ ինքնության որակների պահպանության գործում որոշիչ դեր են ունեցել: Դրա վկայությունն են, մասնավորապես, Մուրբ Գրիգորի կանոնները, Աշտիշափի, Շահապիվանի, Աղվենքի, Դվինի, Միսի եւ բագմաթիվ այլ աշխարհիկ-եկեղեցական ժողովների կողմից

² Արսէն Ղլտրճեան, Նայոց հին իրավունքը, Ալեքսանդրապոլ, 1913, էջեր 3-13:

³ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պարմություն Արծրունյաց փան, Երեւան, 1999, էջ 123:

ընդունված կանոնական սահմանադրությունները, Նովհաննես Օձնեցու Տայոց կանոնագիրքը, համաշխարհային հնչեղություն սպասած մեր դարաստրանագրքերը:

Պարմագրության փաստումով 1130 թվականին է սրեղծվել Դավիթ Ալավկա որդու՝ նախաբանից եւ 97 հոդվածներից կազմված «Կանոնական օրինադրությունը»⁴, որը, համարվելով հայկական ինքնուրույն դարաստրանագրքի սրեղծման առաջին փորձ⁵, հենվելով հայ սովորությանին իրավունքի վրա, սրեղծում է հասարակության մեջ աննախադեպ խորացող արարավոր երեսույթների դեմ իրավական պայքարի լուրջ նախադրյալներ: Դա Տայաստրանի համար այնպիսի ժամանակաշրջան էր, որ, Մովսես Կաղանկավացու խոսքերով՝ «...երեք կարաղի գորապերերը՝ սովը, սուրը եւ մահը ծվարում էին անխնա»: **Անհրաժեշտ էր խիստ օրենք եւ հստակ կարգ ու կանոն՝ առողջ բարքեր ու օրինավոր կենցաղ հաստատելու համար:**

Տայ իրականության մեջ խորապես գիտակցվում էր նաեւ, որ միայն լավ օրենքն ու կարգը բավարար չեն, հարկավոր է, որ մարդիկ նույնպես հասկանան այդ օրենքներով ապրելու անհրաժեշտությունը, **այդ գիտակցությունը լինի ոչ թե պարտադրանք, այլ համոզմունք**, որը խարսխված լինի կայուն, աստվածահաճո, մարդու բանական բնությունից թելադրվող արժեքների վրա: Ինչպես գեղեցիկ բանաձեւում է Պողոս Պարրիարք Աղրիանուպոլսեցին. «Մարդու բարքը ներքուստ ուղղվում է խղճից եւ արտաքուստ՝ օրենքից: Որովհետեւ եթե խիղճը, թյուր կամքից թելադրվելով, կռվում է ընդդեմ ուղիղ բանականության, օրենքը հանդիմանելով սանձում է նրան ու հնազանդության բերում: Խիղճը՝ իբրեւ բնության կողմից հաստատված ներքին դարավոր, եւ օրենքը՝ իբրեւ Աստծուց հաստատված արտաքին իրավարար⁶, կշեռքի երկու թաթի նման արդարության մեպը կենտրոնում են պահում»⁷: Ոչ միայն պարկերավոր է ասված, այլեւ իրավափիլիսոփայական խոր ընդհանրացում ունի այս բանաձեւումը:

Իրավագիտակցության եւ օրինավոր ապրելու հանգամանքը հապուկ կարեւորելով էր, որ դեռեւս XII դարում Ներսես Շնորհալին (Ներսես Դ Կլայեցի) իր խոսքն ուղղեց ոչ միայն առ Աստված, այլեւ «Թուղթ ընդհանրականով» (1166 թ.) իր պարվիրաններն ուղղեց հոգեւոր դասին, «Աշխարհի իշխաններին» ու ժողովրդին: «Թուղթ ընդհանրականը» լինելով Շնորհալու անդրանիկ կոնդակը եւ նրա արձակ գործերի պսակը՝ բացառիկ նշանակություն ունի նաեւ հայ իրավական ու սահմանադրական

⁴ Տե՛ս Ավագյան Ռ. Տ., Տայ իրավական մրքի գանձարան (մ.թ.ա. IX դ.-մ.թ. XIX դ.), Երեւան, 2001, էջ 182:

⁵ Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Քրեական դարավարության պարմական եւ արդի հիմնախնդիրները Տայաստրանում, Երեւան, 2001, էջ 21:

⁶ Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաեւ այս արտահայտությունը՝ «...եւ օրենքը՝ իբրեւ Աստծուց հաստատված արտաքին իրավարար»: Փաստորեն 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբին Պողոս Պարրիարք Աղրիանուպոլսեցին խոսում է «բնական օրենքի» մասին, շեշտում է, որ մարդը միայն օրենքի պահպանությամբ կարող է «...Աստծո նման լինել՝ աստվածային մարդ»: Օրենքի հիմքը Աստվածային մնայուն արժեքներն են, «...ով ուղիղ մրքից ու օրենքի հրամանից խտրովում է, Աստծուն ու իր բնությանը դեմ է դուրս գալիս» (Պողոս Պարրիարք Աղրիանուպոլսեցի. Խրատի թանգարան, Ս. Էջմիածին, 2002, էջեր 163-164:

⁷ Նույն սրեղծում, էջ 163:

մշակույթի այբուբենի ձեւավորման առումով: Այս փաստաթուղթը եզակի է հայեցակարգային-ծրագրային ընդգրկումով, արժեհամակարգային ընդհանրացմամբ, նորմնապարակների, նորմ-սկզբունքների ու «վարվեցողության» նորմերի փոխներդաշնակությամբ: Կազմելով հասարակական բոլոր շերտերին ուղղված (*«Ա՞ն կրօնատորս», «Ա՞ն առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», «Ա՞ն առաջնորդս եկեղեցոյ», «Ա՞ն գինուորյաց դասս», «Ա՞ն երկրագործս», «Ա՞ն կանանց դասս» եւ այլն*) հոգեւոր ու բարոյական բարձր արժեքների վրա խարսխված կանոններ ու խրատներ, Շնորհալին համոզված էր, որ այդ պարտավորությամբ ապրելով եւ գործելով միայն կարելի է հաջողություն ակնկալել, հաղթահարել «չարության ու բազմիշխանության» փազնապները, առաջնորդվել «արդարության շավիղներով»:

Առանց չափազանցելու կարելի է արձանագրել, որ «Թուրթ ընդհանրականը» բովանդակում է մարդու իրավունքներին ու իշխանությունների իրավասություններին վերաբերող բազում նորմեր: Ուշադրության են արժանի Շնորհալու մոտեցումները միայն օրենքով դատելու, օրենքի հեփադարձ ուժի, պարասխանաբարության աստիճանի ու պարտի համաչափության եւ բազմաթիվ այլ իրավական հիմնահարցերի վերաբերյալ: Ավելին, ողջ պարավիրանների հենքը մարդն է՝ իր բարոյական կերպի, հոգեւոր անաղարտության, բանական գոյի իմաստավորված կազմակերպման անհրաժեշտությամբ:

Բերված վկայություններից անառարկելիորեն հեփետում է, որ.

Նախ՝ հայ միջնադարյան իրականության մեջ հասարակական համաձայնության արդյունք է եղել ոչ միայն օրենքի ու կանոնների ընդունումը, այլեւ ակնհայտ է, որ առանձնակի կարեւորվել է դրանց անհրաժեշտությունը եւ հասարակական նման պահանջն ու անհրաժեշտ գիտակցությունն է դրվել այդ կանոնների սահմանման հիմքում⁸:

Երկրորդ՝ օրենքն ու արդարությունը դիրքարկվել են մեկ միասնականության մեջ եւ դրանցով է պայմանավորվել չարի սանձումն ու բարու հաղթանակը:

Մրանք անանցանելի դասեր են բոլոր ժամանակների, առավել եւս՝ անցումային մեր իրականության համար:

Բերենք եւս մեկ կարեւոր վկայություն: Իրավական մտքի բացառիկ օրինակ հանդիսացող՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» (1184 թ.) սրեղծման հիմնական պարճառներից է եղել նաեւ այն, որ չարի գորացումն ավերածությունների պարճառ էր դարձել: Նույն այդ չարը, որ վերածվել էր հոգու անկարարության, վերացրել էր «...կարարելությունը եւ վշտակցության, սիրո փոխարեն դրել արելությունը»: Դատաստանագիրքը

⁸ Խոսելով կանոնական իրավունքի դերի ու որպես իրավունքի աղբյուր դրա նշանակության մասին՝ Ս. Նովհաննիսյանն իրավագիտրեն շեշտում է, որ «...օրար եւ ազգային կանոնախմբերը հնարավորություն են ընճեռում ուրվագճելու հայ ընփանեկան, քրեական, քաղաքացիական իրավունքների կարեւոր ինստիտուտները, պարկերացում կազմելու այն մասին, թե ինչպես էր հայ եկեղեցին իրականացնում «գորճակալութեան մեճի դատարարութեանն» գորճունեությունը, ինչպես թագավորության գոյության, նույնպես եւ պեփականությունից գրկվելու ողջ շրջանում» (փեն Նայ ժողովրդի պատմություն, 8 հատորով: Երեւան, 1967-1984, հ. 2, էջ 482):

պեպք է նպաստեր վերականգնելու բնական օրենքի զգացողությունը, կապարելությունը, եւ արելությունը միմյանց նկատմամբ փոխարինել վշտակցությամբ ու սիրով⁹:

Մեր օրերի համար ուսանելի դասեր են բովանդակում Մխիթար Գոշի հիմնավորումները Դաբաստանագիրքը գրելու անհրաժեշտության վերաբերյալ: Նա, մասնավորապես, շեշտում է, որ.

- ծուլության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիրքության մեջ, անգիրակ են օրենքներին, հետևապես՝ նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից,

- Մովսիսական օրենքը, մարգարեների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն արված լինելով՝ այդպես էլ մնացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը փոփոխել են և փոփոխվում են ըստ ժամանակի, ըստ ժողովրդի և ըստ աշխարհաց: Նեբուքադ, այնպիսի դաբաստանագիրք է պեպք, որ արտահայտի այդ փոփոխությունները,

- առաջ Սուրբ Նոգին ներգործում էր մարդկանց վրա և նպաստում ճշմարիտ դաբաստան կապարելուն, և Նոգին էր օրենք՝գրված մարդկանց սրտերի մեջ, ուստի գրավոր օրենքի կարիքը չկար: Այժմ, երբ Սուրբ Նոգին այն ազդեցությունը չունի և մարդիկ «վրիպել են» քրիստոնեական եղբայրասիրությունից, ուղղամտությունից՝ անհրաժեշտ է դաբաստանագիրք,

- դատական գործերը վճռական են նաև երդմամբ, բայց աճել է չարությունը մարդկանց մեջ, և նրանք, չնայած որ երդումն արգելվել է Աստուծո կողմից, այդուհանդերձ, փեղի և անփեղի երդվում են, և հաճախ՝ սուտ: Խախտված օրինական կարգը վերականգնելու նպատակով գրվեց Դաբաստանագիրքը,

- դաբաստանագիրքը պեպք է օրինականություն և կարգուկանոն հաստատելի, որպեսզի արդարադատությունը լինի անաչառ, անկաշառ և արդարացի:

Ուշագրավ են նաև Մխիթար Գոշի կողմից բերվող այլ պատճառները, սակայն վերոնշյալն աներկբայորեն վկայում է, թե պատմական փյույակ ժամանակաշրջանը՝ 12-րդ դարը, որքան խոր է զգացել դաբաստանագրքի անհրաժեշտությունը՝ հայոց պետականության վերականգնման և հասարակական կյանքում կանոնն ու կարգը հաստատելու համար: Դժբախտաբար, մեր ներկա հանրային իրավամտաբանությունը դեռևս իրավաընկալման այդ մակարդակը չունի: Նամենայնդեպս, ինչ-որ փեղ այդ փպավորությունն ես ունենում, օրինակ, մեզանում ներկայումս գործող քրեական օրենսգրքի կամ քրեական դատավարության օրենսգրքի առանձին դրույթների անդրադառնալիս:

Ցանկանում ենք հատուկ շեշտել, որ ավելի քան ութ հարյուր տարի առաջ Մխիթար Գոշի իրավաբանական հայեցակարգը խարսխվել է բնական (աստվածային) իրավունքի փեսության վրա, որի հիմնական սկզբունքներն են՝ մարդկանց հավասարու-

⁹ Մխիթար Գոշ, Գիրք Դաբաստանի / աշխարասիրությամբ Խոստով Թորոսյանի, Երևան, 1975, էջ ԺԴ:

թյունը (Ասարծո առջեւ), ազատությունը, ապրելու իրավունքը, սեփականության անձեռնմխելիությունը եւ այլն: Ներելաբար, ըստ նրա՝ **դրական իրավունքը պետք է բխեցնել բնական իրավունքի սկզբունքներից, որոնք մնայուն են ու անփոփոխ**¹⁰, իսկ դրական իրավունքն սրեղծվում է մարդկանց կողմից եւ դրա վրա իրենց կնիքն են դնում ժամանակն ու կոնկրետ հասարակական պայմանները¹¹: Իրավունքի եւ օրենքի հասկացութային փարբերությունների նման խոր ընկալումը նույնիսկ շաբերի մոտ մեր օրերում է բացակայում: Դրա վառ վկայությունն են, մասնավորապես, այսօր իսկ Նայասփանում գործող շուրջ երկու փասնյակ այն օրենքները, որոնց առանձին դրույթները վերջին երկու փարում ՆՆ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվեցին հակասահմանադրական:

XVIII դարի վերջին քաղաքակրթությունը պետության Նիմնական օրենքի՝ Սահմանադրության ի հայտ գալու անհրաժեշտությունը կապեց հասարակական համաձայնության հենքի վրա երկրի կայուն եւ դինամիկ զարգացումը երաշխավորելու անհրաժեշտության հետ: Ըստ էության, նույն նպատակն է հեփապնդվել նաեւ հայ իրականության մեջ վաղ միջնադարում: **Պատմությունը վկան է այն իրողության, որ նման իրավական հենքի վրա, հասարակական համաձայնությամբ առաջնորդվելով, ձեռք են բերվել մեծ հաջողություններ, եւ երկիրը զարթոնք է ապրել, իսկ բռնության, «անհասկացողությունների», փարաբնույթ «հակառակությունների» փիրապետման պայմաններում ուղեկից են եղել անխուսափելի կորուստներն ու ավերածությունները:**

Մովսես Խորենացին Նայոց պատմությունն սկսում է «...մեր առաջին թագավորների եւ իշխանների անիմասփասեր բարքերի մասին» կշփամբանքի խոսքերով եւ արժանին է հատուցում նրանց, որոնց «...շարադրած գրվածքները կարդալիս **աշխարհական կարգերի գիփություն ենք ձեռք բերում եւ քաղաքական կարգեր ենք սովորում**»¹² (ընդգծումը մերն է - Գ.Ն.): Անփարակույս, այդ արժանիներից էր նաեւ Վաչագան Թագավորը, որը հասարակական համաձայնություն հասարակելու նպատակով 488թ. նախաձեռնեց Աղվենքի սահմանադիր ժողովի իրավիրումը եւ կանոնական Սահմանադրության ընդունումը, եւ որի իմաստությունից քաղվելիք դասերն այժմեական հնչեղություն ունեն: Այդ սահմանադիր ժողովն իր կառուցակարգային բոլոր փարբերով կարող է բռնել նաեւ մեր ժամանակների քնությունը, եւ միջագային առումով համարվել արդի սահմանադիր ժողովների եգակի նախափիպերից մեկը: Սակայն, ցավոք, այդ ճանապարհով ընթանալը ողջ հայ իրականությանը բնորոշ չդարձավ, եւ մինչեւ մեր

¹⁰ Ըստ Մխիթար Գոշի՝ բնական օրենքը «...յայրնի է ամեն մարդուն բնագոյմամբ եւ չէ կարօփ գրաւոր սահմանադրութեան» (Մխիթար Գոշ, Դարասփանագիրք Նայոց /Իրաւաբանական հեփագօփութիւնք հանդերձ ձանօթութեամբք Վահան ծ. Վարդապետի Բասրամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 94:

¹¹ Տեն Միրումյան Ա., Նայ քաղաքական մարքի պատմությունից, Երեւան, 2002, էջեր 174-176:

¹² Մովսես Խորենացի, Նայոց պատմություն, Երեւան, 1997, էջ 70:

օրերն այդպես էլ Խորենացու ակնկալած «աշխարհական կարգերի գիտությունը» լիարժեք չսերպեցինք:

Չափազանց արժեքավոր են հարկապես Մաթթեոս Ուռհայեցու վկայությունները, երբ խոսելով Աղվենի Կանոնական սահմանադրության (365թ.) ընդունման ժամանակաշրջանին առնչվող իրադարձությունների մասին, նշում է. «...Այն ժամանակներում էր, որ չորս մասի բաժանվեց սուրբ Գրիգորի Աթոռը ...Այն ժամանակներում էր, որ բանական ոչխարները շնաբարո դարձան, գազանները սիրտ ձեռք բերեցին եւ հանդգնեցին եւ սկսեցին հայրապետների երեսին հաչել: ...Սակայն նման փակնովրայությունը եւ սրամտությունը չկարողացավ մուտք գործել Աղվենից երկիրը, որ կոչվում է Խորին աշխարհի Նայոց...»¹³: Եվ գաղտնիքն այն էր, որ այսպեղ ձեւավորվել էր հաշտության հասարակություն, ուր հանրության բոլոր շերտերի ներկայացուցիչների մասնակցությամբ ու համաձայնությամբ հաստատվել էին կենսագոյի հիմնական կանոնները:

Ցանկանում եմ խորհրդատողովի մասնակիցներին հիշեցնել Եվրամիության Սահմանադրության նախագծի 2-րդ հոդվածը, որը, թերեւս, ամենաբուռն ու երկարափութ քննարկումների առարկա դարձավ. **«Միությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդկային արժանապարտությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը: Այս արժեքներն ընդհանուր են Անդամ պետությունների համար, որոնցում հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը»**: Առանց չափազանցելու կարելի է փաստել, որ հայ միջնադարյան իրավամտաբանության արժեքանության ակունքներում առկա են եղել այս արժեքների սաղմերը, որոնց պետական մակարդակում ամբողջականացվելու ճանապարհը, ցավոք, չենք կարողացել անցնել:

Կրկին ու նոր փեսանկյունով անդրադարձ կարարելով սահմանադիր ժողովներին ու կանոնական սահմանադրություններին, կարող ենք ընդհանրացնել, որ հայ միջնադարյան իրականության մեջ գործ ունենք սահմանադրական խոր մշակույթի կոնկրետ դրսևորումների, **սահմանադրականության կարեւոր փարբերի իրողության հետը՝** անկախ պետականության առկայությունից կամ կորստից:

Ուշադրության են արժանի նաեւ օտարազգի հետազոտողների փեսակետները միջնադարյան հայ հասարակական հարաբերությունների թե՛ դրականի եւ թե՛ բացասականի առնչությամբ: Բերենք վերջինիս մեկ օրինակ: Ինչպես նշում է ավստրիացի հետազոտող դոկտոր Կոհլերը՝ հայ իրականության մեջ հասարակական-պետական համակարգի խիստ ապակենտրոնացումը, բազմիշխանությունն ու անմիաբանությունն իրենց

¹³ Մաթթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երեսան, 1991, էջ 247:

մեջ լուրջ վրանգներ են պարունակել, շարունակական կորուստների պատճառ են դարձել: Նման պարագաներում կենտրոնաձիգ արժեքների դերը բացառիկ կարեւորվել է¹⁴:

Նայաստանում քրիստոնեությունը պեղական կրոն հռչակելուց հետո Նայ առաքելական եկեղեցու հետ մեկտեղ այդ հարցում նշանակալից են եղել ազգային-եկեղեցական ժողովների ինքնուրույն դերն ու կանոնական սահմանադրությունների համախմբող նշանակությունը: Սակայն դրանք չեն կարողացել հաղթահարել շարունակական կորուստները: Մեր բոլոր ժամանակների ամենամեծ թերացումն այն է եղել, որ պատմական իրողություններից բավարար դասեր չենք քաղել: Այսօր էլ մեր փարանջապավածությունը, եսակենտրոնությունն ու անմիաբանությունը, «տգիտությամբ չարափառությունը հաստատելու» չհաղթահարվող մոլուցքը նույնաբնույթ վրանգներ են պարունակում՝ արդեն իսկ 21-րդ դարի մարտահրավերների համարեքստում:

Միանշանակ է, որ երբ հայ իրականության մեջ շեշտը դրվել է փոխհասկացողության, փոխհամաձայնությամբ ձեռք բերված կանոնների միջոցով ողջ հանրային կյանքը կարգավորելու վրա, ակնառու առաջընթաց է գրանցվել բոլոր ոլորտներում: Նակառակը, անհամաձայնությունները կամ դրանք բռնությամբ հաղթահարելու փորձերը, եսակենտրոն մտքեցումներն ու ընչաքաղցությունը դարձել են անհաջողությունների պատճառ: Դարերի կշիռ ունեն մեծ Քերթողահոր խոսքերն Արշակունյաց թագավորության կործանման առիթով հնչեցրած ողբում, ուր որպես հիմնական պատճառներ շեշտադրվում են. «...վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»¹⁵: Դեռևս հինգերորդ դարում բացահայտված այս մարգարեական ընդհանրացումները մոռացել ենք նույն «հաջողությամբ», ինչ «հաջողությամբ» մեզ քրիստոնյա կոչելով՝ մոռացել ենք ապրել աստվածային պատվիրաններով: Այնինչ, Խորենացու ընդհանրացումները բացառիկ կարեւոր նշանակություն ունեն մեր ազգային ողջ գոյապայքարում, եւ այսօր էլ լուրջ դասեր են բովանդակում: Ինչպես արդարացիորեն նշում է Ռ. Միրումյանը՝ «Ի փարբերություն Մեթրոդորոս Սկեպսացու, որը մողելավորում է հայերի ապագան նրանց ներկայի իմաստավորման հիման վրա, Խորենացին կանխորոշում է հայ ազգի ապագան նրա անցյալի արժեվորմամբ, քանզի անցյալն է գտնում ազգի ապագայի նախագծի՝ ազգային պեղականության վերականգնման անհրաժեշտության հիմնավորման հիմքը»¹⁶: Մենք ազգովի այս դասերից պատշաճ հետեւություններ անելու կարիքն ունենք:

¹⁴ Գոլեր [Ի. Կոկեր], Իրաւունք Նայոց, Վիեննա, 1890, էջ 3:

¹⁵ Մովսէս Խորենացի, Նայոց պատմություն, Ե դար, Երեւան, 1997, էջ 275:

¹⁶ Միրումյան Ռ.Ա., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանական վերլուծություն, Երեւան, 2003, էջ 42:

Կրկին անդրադարձ կատարելով ազգային-եկեղեցական ժողովների կողմից կանոնական սահմանադրությունների ընդունման իրողություններին՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո, երբ հոգևոր ու աշխարհիկ կյանքի կանոնները հիմնականում համարել են սահմանվել, ամենաբնորոշ է ուշադրության արժանի հանգամանքներից է այն, որ **իրավական կարգավորումների հիմքում դրվել է հասարակական համաձայնության գործոնը**, որը սահմանադրական մշակույթի առանցքային դրսևորումներից է: Նասարակության ներսում հարաբերությունները կանոնակարգվել են ժողովական մակարդակում ձեռք բերված համաձայնությամբ և ոչ թե պարպադրանքի ու միանձնյա թելադրանքի ուժով: Այս իրողությունն ըմբռնելու բանալին մեզ առաջին հերթին փալիս է Մովսես Խորենացին՝ 365թ. Աշտիշափի ժողովին վերաբերող իր հիշատակությամբ՝ Մեծն Ներսեսը «...եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմանադրությամբ հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արեց անգթությունը...»¹⁷:

Տգիտությամբ չարափառությունը չհիմնավորելու համար հայ միջնադարյան պատմությունն ունի նաև այլ ծանրակշիռ վկայություններ՝ հասարակական համաձայնության արդյունք հանդիսացող իրավական կանոններին հեղեղելու շեշտադրումներով: Այս առումով հարկապես առանձնանում է Նայոց Կաթողիկոս Նովհաննես Օձնեցու (Նովհան Իմաստասեր Օձնեցի) Կանոնագիրքը (հաստատվել է Դվինի Զ ժողովում 719 թ.): Ինչպես իրավագիտորեն վկայակոչում է պրոֆեսոր Ռ. Ավագյանը՝ համարձակ կարելի է ասել, որ Նովհան Իմաստասեր Օձնեցին աշխարհում առաջիններից մեկն էր՝ բյուզանդական կայսր Փլավիոս Նուսրիսիանոսից (482-565 թթ.) հետո և առաջինը Նայաստանում, որ իրականացրեց հայկական «Corpus juris canonici»-ի համակարգումը¹⁸: Նայոց Կանոնագիրքը բացառիկ երևույթ է ամենից առաջ այն առումով, որ այն ամփոփեց սահմանադիր բնույթ ու նշանակություն ունեցող կանոններ և իր ժամանակի համար դարձավ IV-VIII դարերին բնորոշ հայ սահմանադրական մտքի յուրապետակ խորացում: Կանոնագիրքը հավասարեց նաև, որ կանոնական սահմանադրությունները բովանդակել են հստակ արժեքային հենքի վրա խարսխված ու կենսունակ նորմեր, որոնք իրենց թե՛ իրավակիրառական նշանակությամբ և թե՛ որպես հասարակական վարքագծի հիմնարար կանոններ մեծ դեր են կատարել ազգի համահավաք գոյի կազմակերպված ընթացքը երաշխավորելու համար: Կանոնագրքի իրավափիլիսոփայական հիմնական առանձնահատկություններից է այն, որ շեշտը դրվում է մարդկային էության որակների վրա: Մարդն իր արժանապատվությամբ և սոցիալական դերով դիտվում է որպես բարձր արժեք, և իրավակարգավորման գլխավոր խնդիրն է համարվում, ինչպես նշում է

¹⁷ Մովսես Խորենացի, Նայոց պատմություն, Ե դար, Երևան, 1997, էջեր 224-225:

¹⁸ Ավագյան Ռ. Ն., Նայ իրավական մտքի գանձարան, հ. 1, Երևան, 2001, էջ 144:

Վազգեն Նակոբյանը՝ «խրատի, բարոյական դարապարաման եւ կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց համակեցության կանոնների հնարավոր խախտումները»¹⁹: Նման իրավամտութիւնները, անտարակույս, վկայում է քաղաքակրթական բարձր որակների եւ իրավական մշակույթի հիմքում ընկած ծանրակշիռ արժեքների մասին:

Պետականութեան դարավոր կորուստը, արտաձին գործոնների շարունակական ազդեցությունը հնարավորութիւն չեն տալիս իրավամտութեան այս հարուստ ժառանգութիւնը սահմանադիր ժողովի միջոցով մարմնավորել երկրի միասնական ու ամբողջական Սահմանադրութեան մէջ: Պատմական անցած ողջ ժամանակաշրջանի համար բնորոշ են եղել սահմանադրական մշակույթի ներկա ընկալումների փոփոխումն ու ամբողջականացումը դրսեւորումները: Սակայն հնարավոր չի եղել կաղապարել մտքի թռիչքը: 1773 թ. Նոյեմբերի Մադրաս քաղաքում հայր եւ որդի Շահամիրյանները նախաձեռնում են 1788 թ. ավարտին են հասցնում իրավունքի բացառիկ մի հուշարձան՝ իրենց երազած անկախ Նայասպահի՝ 521 հոդովածից կազմված Սահմանադրութիւնը, որն անվանեցին «Որոգայթ փառաց»: Այս աշխարհայայտութիւնը հասարակական-իրավական մտքի պարզութեան եզակի ձեռքբերումներից է, որում որոշակի համակարգով առաջադրված գաղափարները, փաստական խոր ընդհանրացումների արդյունք լինելուց զար, միջազգային սահմանադրական գաղափարների ու մեր ժամանակների համար այբբենական դասեր բովանդակող անկյունաքարային արժեք են: Աշխարհայայտութեան հենց անվանումը, սահմանադրական իրավունքի ֆրանսիացի ճանաչված պրոֆեսոր Դոմինիկ Ռուսոյի գնահատմամբ, իրավական ամբողջ մի փոփոխութիւն է: Ինչպէս շեշտում են հեղինակները՝ այս Սահմանադրութիւնը կոչված էր երաշխավորելու «...ազատութիւնը պահպանելու հնարավորութիւն» եւ սրելով «...անճողղապարհի որոգայթ՝ բոլոր վարպար մարդկանց համար, որպէսզի հարկադրված լինեն մտնելու օգտաշար գործողութեան լծի փակ»²⁰: Այն պէտք է ելակերպային նշանակութիւն ունենար արդար օրենքներով կառավարվելու, բնական իրավունքով ու արդարութեամբ առաջնորդվելու համար²¹: Չեխիայի սահմանադրական դարարանի անդամ պրոֆեսոր Ս. Բալիկը 2009թ. Բռնոյում լույս տեսած մի ժողովածուում այս Սահմանադրութիւնը համարել է համաշխարհային իրավական մտքի հուշարձան:

Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ շեշտել այն կարեւոր իրողութիւնը, որ XVIII դարում հայ սահմանադրական մշակույթը հենվում էր իրավունքի գերակայութեան սկզբունքի, բնական իրավունքների առաջնայնութեան գիտակցութեան, իշխանութիւնների փարանշարման, սահմանադրական գործառնութեան, հակակշիռների ու

¹⁹ Տե՛ս Կանոնագիրք Նայոց / աշխարհայայտութեամբ՝ Վազգեն Նակոբյանի, Երեւան, 1964թ., հատոր Ա, էջ XII.

²⁰ Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 15:

²¹ Նույն փեղում, էջ 16:

զսպումների ներդաշնակության երաշխավորման վրա: «Որոգայթ փառացը» ոչ թե եվրոպական իրավական մտքի ներագդեցության արձագանք էր, այլ այն իրավաճանաչողական եւ գիտամեթոդաբանական առումով յուրովի ընդհանրացնում է Ադվենի, Աշտիշարի, Շահապիվանի, Դվինի, Պարպալի եւ այլ ժողովների, Նովհաննես Օձնեցու, Նովհաննես Սարկավագի, Դավիթ Ալավկա որդու²², Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբար Սպարապետի եւ հայ հասարակական-իրավական մտքի էլի շար ու շար այլ երախտավորների բեղմնավոր գործունեության արդյունքները:

Անդրադարձ կատարելով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների փարանջապման ու գործառնական անկախության, սոցիալական պաշտպանվածության, ընդհուպ՝ սահմանադրական արդարադատության եւ սահմանադրական բազմաթիվ այլ հիմնարար սկզբունքներին՝ առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է սահմանադրական իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգ՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ եւ համաշխարհային իրավական մտքի ձեռքբերումները, այլեւ պետական նոր մտածողության սկիզբ դնելով: «Իրավունքի եւ արդարադատության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հասարակության երջանկությունը, ելակետ ունենալով «...օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու» հրամայականը - սա է «Որոգայթ փառացի» մեծագույն պարգամը:

Ամեն ինչից վեր դասելով օրենքի «համահավասար» դերն ու զսպիչ ուժը, դրա հիմքում դնելով իրավունքն ու «մարդու բնությանը ներդաշնակ» արժեքները, **հիմնվելով բնական իրավունքի (աստվածային իրավունքի) եւ հասարակական դաշինքի հայեցակարգերի վրա**, Շահամիրյանները շարադրեցին «Նայաստանյաց աշխարհի կառավարման համար» իրենց սահմանադրական կանոնները, որոնք, սահմանադրական մշակույթի բացառիկ արժեք լինելուց զար, հանրագիտարանային մնայուն նշանակություն ունեն՝ անցյալի ու ներկայի իրավամտածողությունը կամրջելու, անկախ պետականության կայացման ճանապարհն անխտորո անցնելու համար անցյալից ուսանելի դասեր քաղելու առումով:

Եթե հարյուրամյակների պարմական իրողությունն այն էր, որ նույնիսկ պետականության կորստի պայմաններում գործող իրողություն էին սահմանադրական կանոնները՝ ի դեմս ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունների, այսինքն՝ չկար պետականություն, բայց որոշակի առումով կար ու

²² Դավիթ Ալավկա որդու «Կանոնական օրենսդրության» մասին Մանուկ Աբեղյանը նշում է, որ «... այդ երկն իր փեսակով մի նոր բան է եղել մեր հին գրականության պարմության մեջ, եւ այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի» (տե՛ս Նայոց հին գրականության պարմություն // Աբեղյան Մ., երկեր, հ. Գ, Երեւան, 1970, էջ 85):

գործում էր ազգային Սահմանադրություն, ապա խորհրդային շրջանում ձեռավորվեց այլ իրողություն՝ կար գրավոր Սահմանադրություն, որն իրական կյանքի հետ շար քիչ առնչություն ուներ, սակայն զգալի էր սովորության իրավունքի ու ավանդույթների դերը միջանձնային հարաբերություններում:

1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց նորանկախ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությունը, որի 15-ամյակը նշելու ենք հաջորդ փարի: Դրան նախորդել էին շուրջ չորս փարի փեւած բուռն քննարկումները, որոնք վերաբերում էին թե՛ պետության կառավարման ձեւին, թե՛ իշխանությունների փարանջափմանն ու դրանց լիազորություններին եւ թե՛ սահմանադրական կարգի հիմունքներին ու մարդու իրավունքներին առնչվող մի շարք սկզբունքային հարցերի: Չնայած նոր Սահմանադրության շուրջ չհաջողվեց հասարակական համաձայնության այնպիսի մթնոլորտ ապահովել, ինչ Անկախության հռչակագրի պարագայում, ինչպես նաեւ հաղթահարել կամասահման իրավամարտոդրության խորհրդային իներցիան, այսուհանդերձ, կյանքը ցույց փվեց, որ ՆՆ Սահմանադրությունը վճռական դեր խաղաց երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու եւ մի շարք ճգնաժամային իրավիճակներից սահմանադրական ելքեր գտնելու հարցերում:

Սահմանադրագիտության միջազգային չափանիշներից ու մեր երկրի զարգացման խնդիրներից ու առաջնահերթություններից ելնելով մեծ նվաճում պետք է համարել Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքները գլխում ամրագրված դրույթները՝ հափկապես կարեւորելով անփոփոխելի առաջին ու երկրորդ հողվածներն ու 3 - 5 հողվածների իրավափիլիսոփայությունը:

Երկրորդ աշխարհամարտից հետո եվրոպական սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեքը համարվում է այն, որ Արեւմտյան ու Արեւելյան Եվրոպայի երկրների մեծ մասը 50-ականներին ու 90-ականների վերափոխումների նոր ալիքի շրջանում սահմանադրական լուծումների հիմքում դրեցին այնպիսի կարեւոր սկզբունքներ, ինչպիսիք են.

- մարդու արժանապարտությունն ու նրա իրավունքները բարձրագույն եւ անփարելի արժեք են,
- այդ իրավունքներն անմիջական գործող իրավունքներ են,
- իրավունքների սահմանափակման գլխավոր չափանիշն այլոց իրավունքների երաշխավորումն է,
- իշխանությունների փարանջափումն ու հավասարակշռումը պետք է երաշխավորի դինամիկ ներդաշնակություն **գործառույթ-ինստիտուտ-իրավասություն** համակարգում,

- երկրում սահմանադրականության ապահովման, սահմանադրական ժողովրդավարության հաստատման գլխավոր պայմանը Սահմանադրության գերակայության երաշխավորումն է:

Այս սկզբունքները ՆՆ Սահմանադրության մեջ անհրաժեշտ հստակությամբ, առավել խորությամբ ու հայեցակարգային հեղուկականությամբ ամրագրվեցին 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

Ժողովրդավարացման նոր ալիքը 90-ականների սկզբից նորանկախ երկրների առջև դրեց չափազանց բարդ մի խնդիր՝ սահմանադրական զարգացումները երաշխավորել ոչ թե էվոլյուցիոն զարգացման արդյունք հանդիսացող սահմանադրությունների, այլ, այսպես կոչված, արեւմտաեվրոպական եւ ամերիկյան սահմանադրական արժեքաւնության վրա խարսխված մոդելային սահմանադրությունների հիման վրա: Սա, վերջին հաշվով, սահմանադրական հիմնարար արժեքների փրանսպարացիա էր ենթադրում: Նայ իրականության հիմնական առանձնահատկությունը, սակայն, այն էր, որ այդ արժեքները մեր սահմանադրական մշակույթի պատմության մեջ խոր արմատներ ունեին:

Նորանկախ Նայաստանի Նանրապետությունում սահմանադրական զարգացումները, թերեւս, դառնան առանձին ու հանգամանալի ուսումնասիրության առարկա: Այսուհանդերձ, լուրջ դասեր է անհրաժեշտ քաղել այն իրողությունից, որ թե՛ մեզանում եւ թե՛ մի շարք այլ երկրների անցումային հասարակական համակարգերում Կրեդ գրան սահմանադրաիրավական որոշ ձեւախեղումներ, որոնք պայմանավորվեցին երեք հիմնական խումբ գործոններով.

1. իրավամիտությունը եւ իրավակիրառական պրակտիկայի իներցիա,
2. սահմանադրաիրավական խեղված լուծումներ կամ թերացումներ,

3. առաջադիմական իրավական արժեքների մեխանիկական փոխառում կամ պարզեցումներով՝ առանց դրանց իրացման անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների սրեղծման եւ ազգային սահմանադրական մշակույթի խոր հաշվառման, որն իրական կյանքում հանգեցնում է սահմանադրական հիմնական սկզբունքների փարաբոնոյթ ձեւախեղումների կամ գրնված լուծումները կորվում են իրական կյանքից ու օժտված չեն լինում բավարար կենսունակությամբ: Վերջին հաշվով, անառարկելի ճշմարտություն է, որ չհարգված օրենքներով հեղեղված իրավական մշակույթը մի մշակույթ է, որն օրենքի եւ իրավունքի գերիշխանության հանդեպ հարգանք ու վստահություն չի կարող սերմանել:

Անցումային համակարգ ունեցող երկրների համար փրանսֆորմացիայի գերագույն խնդիրը սահմանադրականության հաստատումն է ու սահմանադրական կայուն զարգացումների երաշխավորումը: Վերջինս ենթադրում է՝ ժողովրդավարական ինստիտուտների միջոցով իրավունքի գերակայության երաշխավորում, հասարակական համա-

ձայնության, փոխընթացման ու հանդուրժողականության միջավայրի ձեւավորում, համակեցության հիմնարար կանոնների շուրջ փոխհամաձայնության շարունակական ապահովում ու դրա անհրաժեշտության հանրային գիտակցության արմատավորում է, դրանց շնորհիվ, հասարակության դրական ներուժի ուղղորդում առաջադիմությանն ու զարգացմանը:

Նստակ է նաեւ, թե քաղաքացիական հասարակության կայացման սկզբունքներից ելնելով ինչն է հակացուցված այս գործընթացին: Սահմանադրական զարգացումները չեն կարող ծառայեցվել ընթացիկ քաղաքական նպատակահարմարությանը: Դրանք չեն կարող խաթարել իշխանությունների փարանջապման հաշվեկշիռը, առաջ բերել անհավասարակշռվածություն, նպաստել քաղաքական, վարչական, փնտեսական ուժի սերտացմանը, կենտրոնացմանն ու միատեղմանը: Սահմանադրական գործընթացները չեն կարող թուլացնել մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները, սահմանափակել նրա ազատությունները, խոչընդոտել ինքնակառավարման զարգացմանը: «Մարդու իրավունքներ», «ժողովրդավարություն» եւ «իրավական պետություն» հասկացությունները հանդես են գալիս որպես օրգանական եռամիասնություն եւ սահմանադրականության հաստատման նպատակը դրա երաշխավորումն է:

Այս մարտահրավերների առջեւ է կանգնած նաեւ մեր երկրի սահմանադրական կարգը: Դրանց հաղթահարման գլխավոր կռիւներից մեկը հայ իրավական մտքի պարսկությունից ճիշտ դասեր քաղելն է: Մենք պարտավոր ենք վերջապես սերտել պարսկության գլխավոր դասը. այն ազգն ու ժողովուրդը, ով իր անցյալը պարզաճ չի իմաստավորում եւ անհրաժեշտ դասեր չի քաղում, դարապարտված է վերապրել իր կորուստները: Իսկ դա թույլ տալու իրավունքը մենք պարզապես չունենք:

Շնորհակալություն ուշադրության համար: